



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«21» հունվարի 2020թ.

№ 57

ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՊԱՐՈՆ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,

ի կատարումն Ձեր 20.01.2020թ. թիվ 01/107,3/00404-2020 գրության, տեղեկացնում ենք, որ Գյուլագարակ համայնքի ավագանու արտահերթ նիստը կայանալու է ս/թ հունվարի 22-ին: Կից ներկայացնում ենք ավագանու նիստի վերաբերյալ տեղեկացումը, օրակարգը, հարցերի նախագծերը:

Առդիր 3 ֆայլ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՐ



/Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ/

## ՏԵՂԵԿԱՅՈՒՄ

Գյուլագարակ համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Գյուլագարակ	Ավագանու արտահերթ նիստ	22.01.2020թ.	11:00	<b>Գյուլագարակի</b> համայնքապետարանի վարչական շենքում (ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գյուղ Գյուլագարակ 1-ին փողոց թիվ 2 շենք )

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2020թ. հունվարի 20-ի թիվ 01 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

- 1.Գյուլագարակ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին
  - 2.«Գյուլագարակ համայնքի ընդհանուր սպասարկում» ՀՈԱԿ-ի աշխատակիցների հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
  - 3.Գյուլագարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին
  - 4.Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին/զինվորներին,մահ, ծնունդ, դիմումներ/
  - 5.«Վարդաբլուրի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի աշխատողների հաստիքացուցակը հաստատելու մասին
  6. Ընթացիկ հարցեր
- Ա.Զլինգարյանի դիմումի քննարկում  
Արմեն Դարբինյանի և Հայկ Նալբանդյանի դիմումների քննարկում

«ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀՈԱԿ-Ի  
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ  
ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Զեկ. ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ընդհանուր սպասարկում» ՀՈԱԿ-ի աշխատակիցների հաստիքացուցակը և դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Գյուլագարակ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի ««ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ընդհանուր սպասարկում» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 94-Ա որոշումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՅ  
ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

---

*/Զեկ. Գագիկ Ներկարարյան*

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշեց՝

Հատատել 2020 թ. տարեկան բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ  
ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վահե Դավթյան

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի << Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 17-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով բնակիչների դիմումները, ինչպես նաև համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1/Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից

ա/տորածիններ ունեցող ընտանիքների հատկացնել սոցիալական օգնություն՝

համաձայն թիվ 01 հավելվածի

բ/հարազատին կորցրած ընտանիքների հատկացնել սոցիալական օգնություն՝

համաձայն թիվ 02 հավելվածի.

գ/զինծառայողներ ունեցող ընտանիքների հատկացնել սոցիալական օգնություն՝

համաձայն թիվ 03 հավելվածի

դ/համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն թիվ 04 հավելվածի.

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

«ՎԱՐԴԱԲԼՈՒՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ  
ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ-Ի  
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Զեկ. ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Վարդաբլուրի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի աշխատակիցների 2020թվականի հաստիքացուցակը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:



## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. հունվարի 22-ին՝ ժամը 11.00-ին Գյուլագարակի համայնքապետարանում /համայնքի ղեկավարի աշխատասենյակում/ կայանալիք համայնքի ավագանու արտահերթ նիստի

Ժամը՝ 11.00

1. Գյուլագարակ համայնքի ավագանու 2020թ. դեկտեմբերի 22-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին  
զեկ. Թ.Գրիգորյան
2. «Գյուլագարակ համայնքի ընդհանուր սպասարկում» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը և դրույքաչափերը հաստատելու մասին  
զեկ. Մ. Գևորգյան
3. Գյուլագարակ համայնքի 2020 թ. տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին  
զեկ. Գ.Ներկարարյան
4. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին  
զեկ. Վ.Դավթյան
5. «Վարդաբլուրի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի աշխատողների 2020թվականի հաստիքացուցակը հաստատելու մասին  
զեկ. Վ.Այվազյան
6. Ընթացիկ հարցեր  
զեկ.Թ.Գրիգորյան
7. Գյուլագարակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին  
զեկ. Մ. Գևորգյան